

Հ Ա Յ Կ Ե Ա Ն Ք Ե Ի Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Ուրախութեամբ գալիս ենք յայտնելու, որ հայ տպագրութեան չորսհարիւրամեայ յօբելեանը իւր իրագործման ճանապարհի վրայ է: Չշօշափելով այն ամենը, ինչ որ կատարւում է Թիֆլիզում, գաւառներում և Կովկասից դուրս, ես արձանագրեմ այստեղ հարցին վերաբերեալ այն իրողութիւնները, որ տեղի են ունենում այստեղ—էջմիածնում:

Այս տարուայ դեռ սկզբում Գէորգեան ճեմարանի Մանկավարժական խորհրդի հերթական խնդիրների շարքում դրուած է եղել Հայկական տպագրութեան դարաւոր յօբելեանը տօնելու հարցը: Ճեմարանի Մանկավարժական խորհրդի փետրուարի 21-ի նիստը իւր խորհրդակցութեան նիւթ է դարձնում այդ կարևոր հարցը և միաձայնութեամբ ցանկալի համարում, որ էջմիածինը նախաձեռնող հանդիսանայ այդ մեծ յօբելեանի կատարման գործում: Յանկալի է համարւում այլ և այն, որ տառերի գիւտի 1500-ամեակն ևս տօնուի տպագրութեան 400-ամեակի հետ, քանի որ այդպիսի նշանաւոր յօբելեանն անկարելի եղաւ կատարել մի քանի տարի առաջ՝ մեր կեանքի աննպաստ պայմանների պատճառով: Խօսուում է նաև այն մասին, որ այդ համազգային մեծ տօնը կատարուի առաջիկայ հոկտեմբերի 13-ին. ս. Թարգմանչաց օրը: Խնդրի մշակումն ու մանրամասնութիւնները մնում են առժամանակ:

Այնուհետև Մանկավարժական խորհուրդը իւր ապրիլի 5-ի նիստում անհրաժեշտ է համարում ընտրել մի Յանձնաժողով չորսհարիւրամեակի առթիւ եղած և լինելիք նպատակայարմար և ցանկալի առաջարկութիւնները ձևակերպելու և խմբագրելու: Յանձնաժողովը (պ. պ. Աբեղեան, Կանայեան, Տօշեան, Աբրահամեան, Ալթունեան) ապրիլի 10-ին իւր զեկուցումը ներկայացնում է Մանկավարժական ժողովին, որը վաւերացնում է հետևեալ կէտերը.

ա. Հիմնել ընդհանուր դպրոցական ֆոնդ, որի նպատակը պէտք է լինի տարածել, բազմացնել դպրոցները մեր աշխարհի ամենախուլ անհիւճնները և գրագիտութեանն ու ուսմանը մասնակից դարձնել ըստ կարելւոյն բոլոր հայերին, որով միանգամայն լիակատար հնարաւորութիւն կըստանայ ազգի անհամեմատ աւելի մեծ տոկոսը տպագրութեան գիւտի բարիքներից օգտուել: Խորհուրդը միաձայն գալիս է այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է այդ ֆոնդի հիմնելը և հնարաւոր: Իսկ ֆոնդի կազմակերպութեան խնդիրը թողնոււմ է յետագայ խորհրդակցութեան:

բ. Հիմնել էջմիածնում Համազգային Մատենադարան, որ պիտի կենդրոնանան հայերէն բոլոր ձեռագրերն ու տպագրուած գրքերը, այլ և հայագիտութեան վերաբերեալ բոլոր հայ և օտար աշխատութիւնները: Այդ առաջարկութեան կից խորհուրդը ցանկալի է համարում, որ էջմիածինը Հայկական տպագրութեան առթիւ սկիզբ դնէ և ապահովէ անտիպ ձեռագրերի և բնագիրների կանոնաւոր, պարբերական հրատարակութիւնը:

գ. Առաջարկուում է 400-ամեակի առթիւ էջմիածնում ունենալ մի գիտական օրգան կամ «Մատթէոս Բ. կաթողիկոսի» ֆոնդով, կամ «Արարատ»-ի հրատարակութեան յատկացրած ծախսով և կամ այլ գումարով:

Թէ Յանձնաժողովի և թէ Մանկավարժական խորհրդի այլ անդամների կողմից եղել են և ուրիշ առաջարկներ, որոնք սակայն զանազան նկատումներով չեն ընդունուել:

Այնուհետև ճեմարանի տեսուչ բարձրապատիւ Բագրատ վարդապետը Մանկավարժական խորհրդի արձանագրութիւնը և Յանձնաժողովի գեկուցումը ներկայացնում է Նորին Վեհափառութեան ի սնօրէնութիւն:

Նորին Վեհափառութիւնը ապրիլի 25-ին Կոնդակով (որի պատճէնը սպւում է «Արարատ»ի սոյն համարում) կարգում է Յօբելենական Յանձնաժողով (անդամները—գերապատիւ Տ. Մեսրոպ եպիսկոպոս, բարձրապատիւ Տ. Բագրատ, Տ. Մատթէոս, Տ. Գարեգին, Տ. Բարզէն, Տ. Ներսէս վարդապետներ, շնորհունակ գպիր Գալուստ Տէր Մկրտչեան,

Ճեմարանի ուսուցիչներ պ. պ. Աբեղեան, Կանայեան, Ալթունեան, Աբրահամեան, Էդիլեան) և յանձնարարում շուտով ժողով գումարել Հայկական տպագրութեան չորսհարիւրամեայ յօբելեանի գործը կազմակերպելու և ս. էջմիածնի մասնակցութեան մանրամաս ծրագիրը մշակելու: Միևնոյն ժամանակ Հայրապետական Գիւմնի կողմից Յօբելեանական Յանձնաժողովի ուղագրութեանն է յանձնուում Ճեմարանի Մանկավարժական խորհրդի այդ առթիւ կատարած ամբողջ գործի պատճէնը:

Յօբելեանական Յանձնաժողովն այնուհետև իւր երեք նիստերում (ապրիլի 28-ին, մայիսի 1-ին և 3-ին) հայր Գալուստ Տէր Մկրտչեանի նախագահութեամբ մանրամասն խորհրդակցութեան է ենթարկում Ճեմարանի կատարած աշխատանքը, նորից վերամշակում է և իւր խորհրդակցութեան արդիւնքը ներկայացնում Վեհափառ Կաթողիկոսին ի հաստատութիւն: Ահա Յօբելեանական Յանձնաժողովի որոշումները.

1) Յ. Յանձնաժողովը միաձայն ցանկութիւն է յայտնում միացնել Հայկական տպագրութեան չորսհարիւրամեայ տօնը Մեսրոպեան գրերի գիւտի 1500-ամեակի հետ, քանի որ այս մեծ տօնի յօբելեանը կարելի չեղաւ մի քանի տարի առաջ կատարել, մանաւանդ որ գիտական տեսակէտից հաւանական է, որ Մեսրոպեան գրերի գիւտը 412-ից առաջ եղած չլինէր, ինչպէս և գրանից ոչ շատ յետոյ:

2) Հանդիսի ժամանակի մասին որոշուեց խնդրել Վեհափառ Կաթողիկոսին հանդիսի տօնակատարութիւնը նշանակել առաջիկայ աշնանը—Սուրբ Թարգմանչաց և կամ մի այլ օր, Կոնդակով յայտարարել և առաջարկել այդ տօնը ազգովին կատարելու հայութեան բոլոր մասերում, տօնելով եկեղեցիներում, դպրոցներում, և բոլոր ազգային հաստատութիւնների մէջ:

3) Յ. Յանձնաժողովը միաձայն հաւանութիւն տուեց Գէորգեան Ճեմարանի մանկավարժական ժողովի առաջարկութեան առաջին կէտին—հիմնել եկեղեցական ծխական մի ընդհանուր, համազգային ֆոնդ, որը բաժանուած պէտք է

լինի հայութեան բոլոր մասերի մէջ, Կովկասի բաժինը կենդրոնացած լինելով ս. Էջմիածնում, միւսները՝ համապատասխան վայրերում:

4) Միաձայն՝ անցնում է Հայազիտական Մատենադարան կազմելու խնդիրը: Մատենադարանի մէջ պէտք է ամփոփուին բոլոր հայերէն գրքերը, Հայազիտութեան վերաբերեալ բոլոր հայերէն և օտար աշխատութիւնները:

5) Նոյնպէս միաձայնութեամբ անցաւ այն ցանկութիւնը, որի համաձայն ս. Էջմիածինը պէտք է կանոնաւոր հիմքերի վրայ դնի ձեռագրերի հետզհետէ հրատարակութիւնը:

6) Հայկական տպագրութեան 400-ամեակի առթիւ ս. Էջմիածինը սկիզբ է դնում մի գիտական պարբերական հրատարակութեան, որի առաջին համարը նուիրուած պէտք է լինի տօնին և լոյս պէտք է տեսնի մինչև աշունք, մինչև տօնակատարութիւնը—որպէս մի ինքնուրոյն ժողովածու, Գիտական օրգանը թէ իւր տօնական համարով և թէ ընդհանրապէս լինելու է Հայազիտական բովանդակութեամբ—լայն մտքով: Յատկապէս առաջին համարի հրատարակութեան և խմբագրութեան գործը կազմակերպելու համար ժողովը յարմար համարեց իւր միջից ընտրել մի յատուկ մասնագիտով (հ. Գալուստ Տէր Մկրտչեան, հ. Գարեգին վարդապետ, պ. պ. Կանայեան, Աբեղեան, Աբրահամեան):

7) Տօնի բարձր նշանակութիւնը ընդհանրացնելու և ժողովրդականացնելու համար Յօբելեանական Յանձնագիտովը որոշեց հրատարակել մի հանրամատչելի—ժողովրդականացրած լեզուով և բովանդակութեամբ բրոշիւր, որը պարզելու և լուսաբանելու է երկու մեծ տօների նշանակութիւնն ու կապը: Բրոշիւրը լինելու է ոչ աւել մի տպագրական թերթից, որը կունենայ 64 փոքրադիր երես: Բրոշիւրի համար նշանակել յիսուն ռուբլի մրցանակ, մրցանակի մասին յայտարարել հասարակութեանը և տերմին նշանակել մինչև յունիսի վերջը:

Յօբելեանական Յանձնագիտովի այդ որոշումները արձանագրութեամբ և յայտարարութեամբ մատուցանուած է

Նորին Վեհափառութեան ի բարեհայեցողութիւնս:

Այնուհետև Վեհափառ Կաթողիկոսը մայիսի 7-ի գրութեամբ բարեհաճում է հաստատել Յօրելիենական Յանձնաժողովի այդ որոշումները (բացի 4-րդ կէտից, իսկ 6-րդ կէտի միայն մի մասը, այն է տօնի առթիւ զիտական մի ժողովածու հրատարակել, իսկ ինչ վերաբերում է զիտական օրգանի խնդրին, այդ հարցը առ այժմ առկա է մնում) և պատուիրում, ում հարկաւոր է—գրել այդ մտքով կոնգրակներ Յանձնաժողովի և բոլոր առաջնորդների անունով, իսկ դպրոցական ֆոնդի ժողովարարութեան համար Կովկասի Տ. Փոխարքայից թոյլտուութիւն ստանալուց յետոյ:

Հայկական թերթերը, որոնք թիւրքիայից են գալիս, լի են Փոքր Ասիայի, Կիլիկիայի և Հայաստանի վատթար վիճակի նկարագրով: «Բարեկարգութեան մի յանձնախումբ» պիտի երթար յատկապէս Անատոլի գրութիւնը քննելու և ուեֆորմների օրինագիծ կազմելու համար, բայց մինչև օրս այդ Յանձնախումբը Պօլիս է կեցեր և ուշանում է զանազան ձեւականութիւնների պատճառով: Խայրի բէյ հրաւիրուած էր նախագահելու այդ Յանձնախումբին, բայց նա հրաժարուել է, և կառավարութիւնը, իբր թէ չի կարողանում մի յարմար նախագահ գտնել: Միւս կողմից Հայոց Պատրիարքարանն էլ իւր կողմից գիմում է կառավարութեանը, որ Յանձնաժողովի մէջ հայ անդամներ ևս ընդունուին: Յանձնաժողովը պէտք ունի առ այժմս 10,000 ոսկի վարկի, որ կառավարութիւնը չի կարող և չի ուզում առանց պարլամենտի բաց թողնել... ու գործը ձգձգում է անվերջ:

Եւ մինչդեռ մայրաքաղաքում այդպիսի ձեւականութիւնների և ձգձգումների յետևից են ընկած, այնտեղ, բուն երկրում ժողովուրդը հոգեվարքի մէջ է: «Անատոլուն կադրատանայ, հայ երիտասարդները, երկրին ամենէն խոստմնալից գաւակները կրգազթին, կիսավայրենի ցեղեր ամեն օր կըտարածուին ընդարձակագոյն սահմանի վրայ, ասոնք բոլորը սպառնալիք են երկրին»: Տաճկաց կառավարութիւնը

— ինի դա սահմանադրական թէ միահեծան—շատ լաւ է հասկանում խոստումներ տալ, փայլուն ապագայի հեռանկարը միշտ տեսանելի դարձնել հարստահարուած և տառապանքի անդունդին հասած հայի համար, բայց այդ ապագայի ամենագոր տեսիլն անգամ չի իրականացնէ, ճաշակել չի տայ: Հին, շատ հին երգ է դա, խոստանալ քնեցնելու համար: Եւ սակայն բուն իսկ Թիւրքիայի օգուտը կրպահանջէր, որ Անատոլեան բարեկարգուէր: «Մենք երբէք չենք ակնկալեր—կարգում ենք ամերիկահայ թերթերից մէկում («Կոչնակ» թիւ 19), որ թուրք եղբայրներն հայերուն գթութիւն ցոյց տալու համար Անատոլուն բարեկարգին, ոչ իսկ արդարութեան անունով պիտի համարձակէինք այդ առաջարկն ընել, այլ ուղղակի Օսմ. երկրին պահպանութեան համար պէտք է որ երիտասարդ թուրքերն Անատոլուն բարեկարգեն: Թիւրքիոյ հաստատուն բերողը Հայաստանն է, և պարզ յիմարութիւն պիտի ըլլար թողուլ որ ոճրագործութեան բոյն մը դառնայ ան, փոխանակ կըրթութեամբ, վաճառականութեամբ և արուեստներով օրէ օր ծաղկելու և երկրին ու տէրութեան հարստութիւնն աւելցնելու»:

Վերջերս Պօլսի Խառն Ժողովը իր նիստերից մէկում ի նկատի ունենալով, որ զանազան ձևականութիւնների և պաշտօնական գործողութիւնների շնորհիւ շուտափոյթ լուծում պահանջող գործերը ձգձգուում են ու երկարում, որոշել է կառավարութեան հետ բանակցութիւններ անել ոչ թէ «Թագրիբ»-ների միջոցով, որի գործառնութիւնը բոլորովին անօգուտ և ապարդիւն է, այլ Պատրիարքի և Քաղաք. ու Կրօնական Ժողովների ատենապետների միջոցով, որոնք իրանց անձնական դիմումներով ու հարցին վերաբերեալ մանրամասն բացատրութիւններով իրանց ձայնը աւելի շուտ լսելի կարող են դարձնել: «Պաշտօնական դիմումները պաշտօնական պատասխաններ միայն կըտանան այսինքն խուսափողականներ: Սակայն Պատրիարքարանի պաշտօնեայի մը մէկ ժամու անձնական խօսակցութիւնը թուրք պաշտօնեայի մը հետ կընայ շատ աւելի մեծ գործ տես-

ներ, քան տասը պաշտօնական զիմում»։ Սակայն այս տողերը գրողը չի գիտակցում անշուշտ, որ «Թագրիթ»ներով ձգձգողն ու քնեցնողը, կրճգճգի և կրքնեցնի նաև անգամ խոստումներ տալով։ Տաճկաց կառավարութիւնը թերևս աւելի քան որ և է այլ կառավարութիւն իւրացրել է և իր էութեան անբաժան մասը դարձրել խոստումներով հանգրատացնել։ Խոստումներից գործի անցնելը արևելցու համար շատ դժուար է և ոչ միշտ անհրաժեշտ։

Այս վերջին երկու ամիսը մեր մամուլը լիքն է հայ զրամատուրգներից Նահապետին—Գաբրիէլ Սունդուկեանցին նուիրուած յօդուածներով, քննադատականներով ու վերջուշներով։ Նահապետ Գրամատուրգի մահը, որ անշուշտ մի անակընկալ չէր—եթէ ի նկատի առնենք նրա պատկառելի հասակը—87 տարեկան—բայց և այնպէս խոր ու անկեղծ վշտով համակեց բոլոր նրանց, որոնք սիրում են հայ բեմն ու գեղարուեստը, որոնց համար թանգ է հայրենի կեանքի և գրականութեան բարձրացումը, բարգաւաճումը։ Գրական ընդհանուր ու ազգովին վշտից զատ, որ պատճառեց Գաբրիէլ Սունդուկեանի մահը հայ մտաւորականութեան, մեծ զրամատուրգի մօտ ծանօթներին ու մտերիմներին համակեց նաև մի թախծոտ տխրութիւն, որ հայ կեանքն ու իրականութիւնը գրկուեց իր լաւագոյն անդամներից մէկից ևս—որը մինչև իր կեանքի վերջին օրերը ապրում էր հայ կեանքի, գրականութեան համար, որի երակներում հոսող արիւնը յուզում և փոթորկում է հասարակութիւնը յուզող հարցերով։ Բոլոր վերյիշումների մէջ, որոնք այս վերջերս հանդէս եկան, մի գիծ աչքի է գարնում պայծառ և ցայտուն կերպով, որ Գաբրիէլ Սունդուկեանը բացի մեծ զրամատուրգ, առաջնակարգ թատերերգակ լինելուց, մեծ և լաւ մարդ էր, նուրբ հոգու տէր, կիրթ ու մշակուած ներքին աշխատանքով։ Այդ երկու կողմերի միացումն է անշուշտ, որով այնպէս համոզուած են Սունդուկեանցի բարեկամներն ու յարգողները, նրա

մտերիմներն ու ծանօթները: Գրական և անձնական այդ մեծ արժանիքների այսպիսի բախտաւոր զուգադիպութիւնն անշուշտ յաճախ երևան չէ գալիս մարդկանց մէջ և այդ է պատճառը, որ այդ հազուադիւտ անհատները կապում, կաշկանդում են մարդկանց իրանց տաղանդի ուժով և մարդկային լայն ու մարդասէր, բարի ու գեղեցիկ ուղղուած անխարդախ բնաւորութեամբ: Սունդուկեանը մէկն էր այդ հազուադիւտ անհատներից, ուստի և նա անմահ, կը մնայ հայ բեմի համար, որտեղ գործել է նրա տաղանդը, և անմոռաց իւր ծանօթների ընդարձակ շրջանում:

Պ. Տիգրան Նազարեանը միայն իրան յատուկ աննկուն եռանդով և աշխատասիրութեամբ «Տարազ»-ի համարներից մէկը նուիրել է «Գաբրիէլ Սունդուկեանի յաւերժ յիշատակին» ու այդ համարի մէջ (№ 4, ապրել, 1912) ժողովել և ամփոփել նրան վերաբերեալ բազմաթիւ լուսանկարներ, յուշեր և նոտեր, նրա տաղանդն ու գրական փառքը շօշափող շատ յօդուածներ, նրա բնաւորութեան, առօրեայ կեանքին, նրա ճաշակներին ու գաղափարներին վերաբերեալ բազմաթիւ լուսարանութիւններ: Ու բոլորն էլ հետաքրքիր և արժանի ուշադրութեան: Արժէ, որ Գաբրիէլ Սունդուկեանցի յիշատակն յարգողները գոնէ «Տարազ»ի այդ բացառիկ համարն ունենան:

Մեր գրականութեան, մեր մամուլի մէջ յուսակտուր ձայներ ևս լսուեցին Սունդուկեանցի մահուան առթիւ թէ գնում, բեմից իջնում են մեր Նահապետները ու նրանց փոխարինող չկայ. մեր կեանքն իբր թէ ամայանում է ու նորերը չեն բռնում հների տեղը: Այդ տրամադրութեան տիպիկական ներկայացուցիչն են հետևեալ տողերը, որ ես առնում եմ «Տարազի» դարձեալ նոյն համարից և որոնց տակ ստորագրուած է ,Բենիկ վարդապետ՝ . . . Իսկ ես տխուր չեմ իր մահուան վրայ. բնութիւնն իր հարկը պահանջեց ու տարաւ Սունդուկեանցի հողեղէնը հողերուն խառնելու: Բայց տխուր եմ ու ցաւած հոգով, որ ընկած կաղնիներու տեղը էլ կաղնի չի բուսնում հայ հողի վրայ, այլ անամէջ եղէգն «շարժուն ի հողմոյ», մեռնում են մե-

ծերը և նրանց տեղը մեծ փոքրութիւններն են բռնում: Այս մահ է, բարոյական մահ մեր ազգի համար, այս մահու առջին է, որ ցաւում եմ ու հոգով լալիս»:

Մենք չենք բաժանում այդ տրամադրութիւնը, ոչ էլ կարծում ենք, որ հայ հողը անընդունակ է այլ ևս մեծ կազմիներ առաջացնելու: Մի հող որ տուել է կազմիներ, նա կըտայ այնուհետև ևս. միայն թէ մարդ պիտի քաջութիւն ունենայ այդպիսի արհամարհանքով չանցնի «փոքրերի» վրայով և չանուանի այդ փոքրերին սնամէջ եղէգն: Սունդուկեանը մի անգամից մեծ չէ ծնուել: Եւ ինչքան որ այդպիսի տողերը գրւում են իբր թէ մեծարելու մեր մեծ գրողների ու մտածողների յիշատակը, այնքան նրանք վիրաւորող են ու արհամարհանքով լիքը դէպի երիտասարդ սերունդը, որ ապրում և յուզւում է դեռ ևս անորոշ վիճակների մէջ, որի մէջ սակայն թաղնուած են մեր ապագայ մեծ գրողները:

Վերև մէջ տեղ բերուած տողերից ինչքան տարբեր է հնչւում Շիրվանզադէի ճառի հետևեալ կտորը, որ մենք քաղում ենք դարձեալ այդ համարից: «Պէտք է արդեօք, փնտրիլ Սունդուկեանցի կորուստով: Ո՛չ, հազար անգամ ոչ: Ինչո՞ւ: Որովհետև հայ ազգն այնքան էլ անպտղաբեր չէ, որքան գուցէ կարծւում է: Ապացոյց, որ նա տուել է մի Սունդուկեանց, նա դարձեալ կը տայ Սունդուկեանցներ: Նա կը տայ աւելի, եթէ միայն մենք անշէղ պահենք մեր սրտերում սէրը դէպի մայրենի թատրոնը և մայրենի գրականութիւնը»:

Թող մեր երիտասարդ գրողները ողբալով Սունդուկեանի մահը— շարունակեն Սունդուկեանի ճանապարհներով գնալ— նրա սէրը, նրա անկեղծութիւնը, նրա ջիղը մտքը— նեն նաև գրականութեան մէջ և հաւատում եմ, որ տասնեակ ու բազմաթիւ երիտասարդների միջից տարիների շարքում գուրս կը գան անշուշտ նաև ուրիշ Սունդուկեաններ:

Գ. Ալթունեան.